ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<11>> օգոստոսի 2020թ. N ՄՈ/353-2020

ք. Արմավիր

<<ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳՈՌ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածով, 161-րդ հոդվածի 2-րդ մասով, 163-րդ, 164-րդ հոդվածներով և 169-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 12-ի ՆՄԿ/213-2019 կարգադրությունը, <<Վաղարշապատի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գոռ Ասատրյանի 2020 թվականի օգոստոսի 5-ի դիմումը

որոշում եմ՝

1. <<Վաղարշապատի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գոռ Ասատրյանին տրամադրել 2018-2019 թվականների աշխատանքային տարվա իր տեղափոխված արձակուրդը՝ 4 աշխատանքային օր, 2019-2020 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մասը՝ 6 աշխատանքային օր՝ 2020 թվականի օգոստոսի 19-ից սեպտեմբերի 1-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գոռ Ասատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Վաղարշապատի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի բուժական գծով տեղակալ Մելիքսեթ Կոնդյանին:
3. Գոռ Ասատրյանին աշխատանքի մեջ համարել 2020 թվականի սեպտեմբերի 2-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 11.08.2020 11:07:05 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230